Յայսմհետէ մինչև 'ի թագաւորութիւնն Վաղարշակայ 'ի Հայս՝ ոչինչ ունիմ ասել ասէ զիտունն մեր Խորենացին. զի շփոթեալ երկիրն՝ այր զարամբք ելանէին տիրել աշխարհիս մերոյ. վասն այսորիկ դիւրամուտ եղև յաշխարհս մեր Արշակ։ Այս Արշակ մեծ թագաւորեցոյց զեղբայր իւր զՎաղարշակ 'ի վերայ աշխարհիս Հայոց. զոր յերկրորդ գաւազանին ցուցանելոց եմք յառաջիկայդ. և այս առաջին գաւազանս ազգիս Հայկայ ցուցաւ սկըսեալ 'ի Նոյայ Նահապետէ՝ որդւոյ Յաբեթիէ։ Եւ պատմագիրս Մովսէս Թարգմանիչ Խորենացի Քերթողահայրն՝ յերիս արս պարծի յիրաւի արժանիս յիշատակութեան 'ի Հայկ, յԱրամ և 'ի Տիգրան։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան